# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

***Գավառ, Կենտրոնական հրապարակ 7*** **«15» «06» 2018թ.**
**ժ 11:00**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
Վալեր Հոդաբաշլան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. Հայտերը բացվել են armeps համակարգի միջոցով 2018թ. հունիսի 15-ին՝ ժամը 11:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| հ/հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | <<Եվրոպա>> ՍՊԸ |
| 2 | <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ |
| 3 | <<Բիդեք>> ՍՊԸ |
| 4 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ |
| 5 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ |

3. Բոլոր մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են:

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | <<Եվրոպա>> ՍՊԸ | Հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին |
| 2 | <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ | Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին |
| 3 | <<Բիդեք>> ՍՊԸ | Հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին |
| 4 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | Հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին |
| 5 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ | Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին |

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- մերժել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի ներկայացրած հայտերը հետևյալ հիմնավորմամբ՝

- <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի, մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկները

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ

ՀՀ դրամ

| հ/հ | Մասնակցի անվանումը | Աշխատանքի նախահաշվային գինը | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ | Առաջարկված գնի՝ ԱԱՀ | Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Եվրոպա>> ՍՊԸ | 712933310 | 425974100 | 85194820 | 511168920 |
| 2 | <<Բիդեք>> ՍՊԸ | | 439166667 | 87833333 | 527000000 |
| 3 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | | 465000000 | 93000000 | 558000000 |

6. ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկի հիման վրա:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Եվրոպա>> ՍՊԸ-ին:

7. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

ա/ ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

բ/ ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ <<Եվրոպա>> ՍՊԸ–ին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան